ՏՈՅԵՍԱՏ ԱՂԱՂԱՐԻՔԻ

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ

ԹՈՒ. Գ. ԲԱ ՏԱՐԻ — ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ՇԱԲԱԹ 14 ՓԵՏՐՎԱՐԻ 1853 — ԹԻՎ 49

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ ԼՈՒՐԵՐ

— Ամէնաճի սենեկին անդամներէն Ազմի պէյը Տրամայի տեղակալ անուանեցաւ։

— Ընտաքին գործերուն նախարարի Թղթակցութեան սենեկին անդամներէն Միւշտի պէյը հասարակաց կրթութեան ժողովոյն առաջին քարտուղար կարգեցաւ և երրորդ աստիճանի պաշտօնատարաց կարգը անցաւ։

— Նոյն ժողովոյն երկրորդ քարտուղարութիւնն ալ յիշեալ Թղթակցութեան սենեկին անդամներէն Պէհճէթ պէյին յանձնուեցաւ։ որուն և չորրորդ աստիճան ալ շնորհուեցաւ։

— Ընդհանուր ուսումնարանաց վերատեսուչին երկրորդ օգնական Ահմէտ էֆէնտին, դատաստանութեան կարգէն եկաւ ու չորրորդ աստիճանի պաշտօնատար եղաւ։

— Յայնինկէնի կոմը Աւստրիոյ սէրութեան կողմէն իրեն յանձնուած պաշտօնը յաջողութեամբ և երկու սէրութեանց օգտին համաձայն կատարած ըլլալով՝ երեքշաբթի օր կայսերական պալատը գնայ ու Վեհափառ Սուլթանին վերջին այցելութիւնը ընէէն ետքը, բարձրագոյն դուռն ալ եկաւ Մեծ եպարգոսին և արտաքին գործոց տեսուչին այցելութիւն ըրաւ ու անկէ պատերազմի նախարարին հետ ալ աեանուելու երթալով՝ Մայրաքաղաքէս մեկնեցաւ Աւստրիական շոգենաւով Վիէննա դառնալու համար։

— Ընկեալ հինգշաբթի օր Յաւլաէթի Մաղբէզը կայսերական պալատը գընաց ու Վեհափառ Սուլթանին իւր հրաժարական այցելութիւնը ընելով՝ խոնարհ ակնածութեան յարգանքը մատոյց և սովորական մարդասիրութեամբ նորին Մեծութենէն ընդունուեցաւ։ Վերջը Բարձրագոյն դուռն ալ գալով՝ կայսերական Տէրութեան նախարարաց հետ տեսութիւն ըրաւ, և հետեւեալ օրը գաղղիական շոգենաւով Մայրաքաղաքէս մեկնեցաւ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ։ Լոնտոն 9 փետրվարի։ Կառավարութիւնը հասարակաց կրթութեան և ազգային երեսփոխանաց ընտրութեան վերաբերեալ օրինաց փոփոխութեանը վրայ կը խորհուի։

Նկամանից հարկն ալ կարգադրելու խորհուրդ կայ։ բայց դեռ չգիտցուիր թէ Եւլեմբանից նախարարը ինչ ճամբայ առնելու է։

ՊԷՍՊԷՍ փարիզ 10 փետրվարի։ Էմսոյս 6ին քառասուն յիսուն մարդիկ բռնուեցան, որոնք խռովարար թուղթեր կը հրատարակէին ընդ դէմ կառավարութեան։

— Մոնիթէօր լրագիրը ելեւմտից նախարարին կողմն տէրութեան եկամտից և ծախուց հաշիւը կը հրատարակէ։

1852ին հաշիւը 54 միլիոն ֆրանք բաց ունէր որ արտաքոյ կարգի ծախուց պատճառաւ 103 միլիոնի՝ հասած էր, և քանի մը ծախուց պակասելով ու եկամտից աւելնալովը յիշեալ բացը 18 միլիոնի եղած էր։ Ամ բացը 652 միլիոն հին պարտուց վրայ զարնելով 680 միլիոն հասած էր, և տէրութեան պարտամուրհակաց փոխանակութենէն ալ 78 միլիոն վնաս ընելով, 1853ի սկիզբը տէրութեան հաշուոյ բացը 758 միլիոն ֆրանք էր։

Այս 758 միլիոն ֆրանք պարտքը 667 միլիոնի կ'իջեցնէ ելեւմտից նախարարը քանի մը երկաթուղեաց ընկերութեան պարտամուրհակները անցեալ տարուան հաշիւը անցունելով։ Իսկ 1853 տարուան տէրութեան հաշիւը միայն 52½ միլիոն ֆրանք բաց ունի։ Բայց ելեւմտից նախարարը կը յուսայ որ արքունիս վերջը տէրութեան ծախքն ու եկամուտը հաւասարի։

ԵՒՈՍՏԻԱ։ Վիէննա 8 փետրվարի։ Ներքին գործոց նախարարը երեւելի վճիռ մը հանեց որով աւստրիացւոց կրծանուցուի որ եթէ Ամերիկա գաղթելու ըլլան, Աւստրիոյ մէջ քաղաքական իրաւունքներին կը կորսնցունեն, և ըստ պարագայից նորէն Աւստրիա դառնալու հրաման չպիտի ստանան։ Բրտաքին գործոց տեսուչնալ օտար երկիրներ գտնուող դեսպաններուն գրեց որ Ամերիկայէն դարձօղ աւստրիացի գաղթականներուն անցագիրը կրկին Աւստրիա մտնելու համար չը նշանակեն առանց հրամանի տեղութեան։

— Աւստրիոյ և Բրուսիոյ մէջ առևտրական դաշնադրութիւն մը հաստատուեր է 12 տարուան համար։ Կըսուի թէ Վիրմանիոյ զանազան կառավարութիւններն ալ այս դաշնադրութեան մասնակից պիտի ըլլան։

ՀՆԴԿԱՍՏԱՆ։ Ռոմբայ 13 յունվարի։ Պիրմանաց սէրութեան Պէկու գաւառը Ընդկոյոյ իշխանութեան տակ գտնուած Ընդկաստանի երկիրներուն յարեցաւ, և այս երկրի ընդարձակութիւնը պաշտօնական կերպիւ ծանուցուեցաւ։ Մինթր Փայրը յիշեալ գաւառին կառավարիչ կարգեցաւ։

Այս դէպքը Ընդղիացւոց յաղթութենէն ետքը ամէն կողմէն սպասուած ըլլալուն՝ մեծ ազդեցութիւն մը չբերաւ։ Ընդկաստանի ընդհանուր կուսակալին հրատարակած ծանուցագիրը աղդու և համառօտ էր, և վերջը կը յայտնէ որ եթէ Անգլիայի թագաւորը իւր վաղեմի բարեկամական յարաբերութիւնները շնորհագէ և չթողու որ Ընդղիացիք հանգիստ վայելեն Պէկուի գաւառին իշխանութիւնը, այն ատենը Ընդղիական Ընդկաստանի կառավարութիւնը իւր ձեռքը գտնուած ջերմութիւնը՝ ի գործ պիտի դնէ վրէժ առնելու համար և ասոր հետեւանքով պիտի ըլլայ Անգլիայի թագաւորին և իւր ցեղին կորնանումն ու աւարառութիւնը։ Կը կարծուի թէ Անգլիայի թագաւորը առաջուանէն աւելի խոհեմութեամբ վարուելով՝ իւր զօրեղ դրացին չը դրգռեր այսուհետև։

ԱՋՊԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

— Սերասքիոյ Սենեքերիմեան ընկերութեան անդամոց թիւն ալ 290ի հասնելով, 580 բաժին ստորագրուեր են որ 12½ զուռուշէն տարեկան եկամուտը առայժմ 7,250 դահեկան եղեր է։

— Տրտմութեամբ կը տեսնենք որ Սամաթիոյ Ս. Սահակեան վարժարանի եկամուտը ծախուցը չբաւելով՝ մեծ նեղութեան մէջ ինկեր է, և ապրիս բարեպաշտութեանը կը դիմէ օգնութիւն խնդրելու համար։ Զեմք երկբայիր որ ազգասէր բարերարները ըստ սովորութեան իրենց առատաձեռնութիւնը չպիտի խնայեն։

— Մեծ ուրախութեամբ կը լսենք թէ Վանայ Արծրունեաց ընկերութիւնը որ նոյն երկրին Հայ ժողովրդոց բարոյական կրթութեանը համար քանի մը տարի հետէ հաստատուած՝ արժանագով սիրով կը շարունակէ, այս մօտերս մարդասիրական ընկերութիւն մըն ալ հաստատեր է երկրագործութիւնը ծաղկեցընելու համար։ Այս ընկերութեան տեսչին մէկ բաժինը 250 զուռուշ ըլլալով՝ արդէն 11 ազգասէր անձինք 120 բաժին ստորագրուեր են որ 30,000 դահեկան կընէ։

Ընշուշտ այս գովելի օրինակին բարեպաշտ անձինք հետևելու պիտի փութան՝ ի պարծանս ազգային ընկերասիրութեան։

— Յ. Մ. յարգելին Զմիւռնի այէն երկրորդ նամակին ալ կը գրէ Սիւնեաց ընկերութեան վերջօրք, զոր Մասիսի յարգոյ խմբագիրը Զմիւռնիոյ մէջ գտնուած իւր յարգի քաջանորդաց (և ոչ առաջինին պէս ընկերութեան անդամոց) մեծագոյն մասին ապիպելովը կը պարտաւորի հրատարակելու և մեք համառօտիւ կը պատասխանենք։

Կարծեմք բարեմիտ հասարակութիւնը մեր այս խնդրոյն վրայ Նոյեան Ղաւնեայ 45և47րդ թերթերուն մէջ պարզ և դիւրիմաց կերպով գրած երկու յօդուածներէն տեսած է մեր փափաքը որ Սիւնեաց ազգօգուտ ընկերութիւնը չը խափանուի, և մեր խրատը թէ փոխանակ խափանելու զայն՝ ընկերութեան դրամը պահանջելու իրաւունքը և պարտաւորութիւնը օրինաւոր միջոցներով իրագործ դրուին։

Ա՛ս մեր փափաքն ու խրատը Յ. Մ. յարգելոյն սեպհական օգուտ և անշնորհաբերութեան համարուեր է, որն որ ուղիղ դատողութեանը մեծ պատիւ չըներ։

Սիրով կ'ընդունիմք Յ. Մ. յարգելոյն այս տողերը թէ Իզմիրոյ պապուելի ատարաքոմիթեանը մէջ ամենէն փափաքողը չի կայ Սիւնեաց ընկերութեան խափանմանը, և կը ցանկայինք որ մնացեալ տողերն ալ աւելի համոզիչ բանիւք նոյն հաւատարիքը հաստատէին, որոնք թէպէտ այն մտօք գրուած չեն երևար, բայց կը յուսամք միշտ որ գտնէ այսուհետև այնպէս ըլլան, և այն խօսքերուն միտքը իրօք ալ ցուցուին։

Ուրախութեամբ կարդացինք նաև յիշեալ նամակին այս տողերը թէ՝ ընկերութեան անդամոց մէջ եպիսկոպոսութեան կամ կղերականութեան վայ և կը հաւատամք որովհետև նոյն նամակը Մոսկի յարգոյ քաջանորդաց ձեռագրոյն մասին ապիպելովը հրատարակուած է և այլ թէ Սիւնեաց ընկերութեան անդամոց մէջ մասին կասակցութիւնը, ինչպէս որ առաջին նամակին համար սխալմամբ ըսուած ըլլալով՝ մեզ ալ այն կարծիքը տուած էր, կամ թէ յատուկ դիտամամբ այնպէս ըսած էինք որ ձշմարտութիւնը խոստովանել տանք։

Յ. Մ. յարգելին կուզէ հաւատացընել թէ ժողովով մը ընկերութեան դադրած ըլլալը հասարակութիւնը ոչ ասելոյ ընդունելը Մեծապատիւ դպրապետ յանձնուելը պնդելիութիւնը է։ Այսպիսի ժողով մը և անօրէնութիւն մը եթէ օրինաւոր ըլլար՝ հարկաւ լրագրոյ միջոցաւ պիտի հրատարակուէր ստորագրողաց անուամբը։ Այնպիսի անօրէնութիւն մը, եթէ չեմք սխալիր, ընկերութեան խորհրդական անդամոց մեծագոյն մասին մեծամամբը պիտի գործադրուի, ուրեմն կանոնին համեմատ։

Բայց ի՞նչ անակնկալ դիպուած պատահեցաւ որ ընկերութիւնը խափանուի (կանոն 21)։

Եթէ 1845 թուին հրկիզութեան պատճառաւ և այժմ Անկիւրոյ շինութեան դրամոյն ընկերութիւնը առաջին գործունէութիւնը չունի կամ ըսենք թէ ատենանակեայ դադարման մէջ է, օրինաւոր ճարտեսք գանիկոյ բոլորովին խափանել։

Եթէ խափանմանը օրինաւոր պատճառ մը կայ՝ թող խորհրդական անդամները վճռեն, կամ բաժանորդաց հաստատեալ մեծագոյն մասին կամքը խնդրեն, և եթէ խափանումը դժբաղդաբար վճռուի՝ այն ժամանակ կամ Տեսուչ օրինեալ եղիցի ըսենք։

Բայց մեր փափաքը և խորհուրդը այն է որ 19 կամ 35,000 զուռուշը առնուի, արդիւնքը ընկերութեան օգտին գործածուելու պայմանաւ անշարժ ստացուածք մը գնուի (ինչպէս որ իրաւամբ կը ցանկայ Յ. Մ. յարգելին) և ընկերութիւնը վերանորոգուի, և ոչ թէ ստակը առ անց

հարկաւորութեան Եւրոպեան վարժարանին տրուի և երկոտասանամեայ ազգօգուտ ընկերութիւն մը խափանուի, որն որ դժուարաւ կրնայ մէյ մըն ալ հաստատուիլ։

Լէրլէ Բանկոյ կարծեմք անիրաւարար կը գանգատի Յ. Ս. յարգելին որպէս թէ մեք իւր անձնական պատուոյն դէմ վնասաբեր նախապէս ըրած ըլլամք։ Սակայն յօդուածը առանց կրից կարդացող բարեմիտ հասարակութիւնը անոր մէջ ոչ թէ վնասաբեր նախապէս, այլ ամենաթեթեւ յանդիմանութիւն կը տեսնէ, անալ ոչ թէ ուղղակի Յ. Ս. յարգելւոյն՝ միայն այլ այն անձանց դէմ որոնք ազգային ընկերութեան մը խափանմանը համար փափաքու ջանք կընեն. հ. որովհետեւ երկրորդ նամակաւը կը բողոքէ թէ ինքն անունցմէ չէ, մեր յանդիմանութիւնը իրեն համար ընդունելու չէր։

— Հարաթագրիս ներկայ և վերջին երեք թերթերով հրատարակուած Խարբերդու վիճակին սաստրագրութեան մէջ, այն կողմերու ժողովրդեան ցաւալի կացութեան պատմութեանը հետ քանի մը պակասութիւններ ալ յիշուած են։ Մինչեպէտ ոմանց այն պակասութիւնները ծաղը երևնալով մեղադրեցին զմեզ, որ ի՞նչպէս որոշեցինք զանոնք ազգային լրագրի մը մէջ հրատարակելու, բայց աւելի ազատամիտները մեզի հետ կարծեցին, որ ըստ օրէնս առանց պակասութեան ամենևին ապդ մը չըկայ, այսպիսի պակասութեանց յիշատակութիւնը ամենևին նախատինք չըկրնար համարուիլ մեր ազգին։ Ընդ հակառակն որ և իցէ յանցանք այն ժամանակ թեթեւ կը համարուի, այն ժամանակ ներելի կըլլայ, երբ անոր տէրը զանիկայ ճանչնայ, խոստովանի և ուղղելու աշխատիլը ցուցունէ առանց ոպասելու որ օտար ազգի (որոնք ուրիշի պակասութիւնը խոշորացոյցով կը տեսնեն և սև գոյներով կը նկարագրեն) իմացուսնեն զայն իրեն։

Յիշելիէ ինչպէս որ արժանահաւատ անձինք կապահովցընեն զմեզ, կը խոստովանիմք որ յիշեալ սաստրագրութեան մէջ ցուցուած պակասութիւնները փոքր ինչ չափազանցեալ կերևան մեզ, և մեծագոյն մասամբ անցած տարիներու մէջ տեղի ունեցած պիտի ըլլան, բայց և այնպէս եթէ փոքրիկ մասն ալ գտնուելու ըլլայ՝ ամեն ազգասիրաց աչքին մեծ կերևայ, և ամեն ազգասիրի պարտքն է անհեա ընելու զայն առատագութ Պայսեր բարեհնամ կառավարութեան բարձր կամացը համեմատ։

Ընդ ապարակուսիր ամենևին որ ասանկ մեկ յօդուած մը հրատարակելովնիս՝ յարգոյ ընթերցողները կասկածին թէ մեր ազգասիրական զգացմունքը տրկարացած ըլլան, և առանց անձնասիրութեան կը հաւատամք որ՝ զայն մեր ազգը սրտով սիրելնուս նոր ապացոյց մը համարեն։ Մեր նպատակը (աւելորդ է կրկնելու) այն է որ յիշեալ պակասութեանց տերերը թէ Խարբերդու, և թէ ուրիշ վիճակաց մէջ գիտնան թէ այսուհետև ազգը լուութեամբ չպիտի համբերէ անոնց յամառութեամբ կամ անպիտութեամբ բռնած ճամբուն, և թէ ծածկաբար խրատուց մտիկ չընելով ժամանակին՝ հրատարակութեամբ պիտի ամչցունէ և ուղղէ զանոնք։ Այս կերպով է որ Եւրոպացի ազգերը ամենայն մասամբ լուսաւորութեան բարձր աստիճանը հասած են և օրէ օր յառաջադէմ պարդանալու վրայ են։

Եւ այժմ ուրախութեամբ կը լսեմք և պատիւ կը համարիմք ըսելու թէ Ամենապատիւ Սրբազան պատրիարք հայրերնիս պէտք եղած տնօրէնութիւնները 'ի դործ դրած ՝էր արդէն, և շնորհափայլ տէր Յովհաննէս վարդապետին նամակը Նոյեան Ընտանոյ մէջ հրատարակուելուն պէս ալ անմիջապէս ևս առաւել անաչառութեամբ պատուիրանաց կոնդակներ ղրկեց յիշեալ գիտնական վարդապետին և Խարբերդու վիճակի առաջնորդներուն, որ այսուհետև աւելի խոհեմութեամբ վարուին և քրիստոնէական խնամոք հոգեն այն կողմերու ժողովրդոց վրայ, և նորէն առիթ չտան ազգիս սիրտը ցաւցընելու։

Այս ալ նորէն յիշատակենք, 'ի պատիւ ազգային կառավարութեան, որ Ընտարունի տէր Յովհաննէս արժանապատիւ վարդապետը քանի մը ամիս առաջ Խարբերդ ղրկուեցաւ նէ՝ յատկապէս այն գովելի նպատակաւ էր որ նոյն վիճակի ժողովուրդը կրթելու պէտք եղած միջոցներուն վրայ խորհի և ամէն խաղաղասիրական հնարքները բանեցընէ. և այս դիտաւորութեամբ ալ դպրատուն հաստատելու և եղածները բարեկարգելու հոգ տարաւ ինչպէս որ ժամանակին ազգային լրագրոց մէջ յիշատակուեցաւ գովութեամբ։

Խարբերդի վիճակին սարպարէութեան շրջանակագրինը։

« Սուրբ Աստուածածնայ վանք'ի դաշտին Խարբերդի 'ի ձորամէջ վայրի և մի 'ի ջրից վանից գաւառաց՝աշխարհիս հնագոյն քան զերիս վանորայս երկրիս՝ իշխանութիւն վանացս զևատական որդի հօր յաջորդելով. 'ի մէջ պարսպին գոյ ևս մի փոքրիկ եկեղեցի աւելի հին յանուն սրբոյ Կարապետի, խնայաբնեալ գմբեթին՝ այժմ ըստ ամենայնի աւերեալ։

« Եկեղեցի սրբոյն Աստուածածնայ՝ ունի զերիս խորանս։ Ի ներքոյ ձախակողմն խորանին ցուցանեն զտապան սրբոյն, և 'ի վերայ տապանաքար առանց արձանագրութեան ըստ սովորութեան հնոց. բայց պատուական մշտավառ կանթեղիւք, բաց 'ի դլխոյն անդ ասեն բոլոր մարմնոյն գոլ։ Մի՞թարանք վանից երկու վարդապետք . . . . . Ունին զբաւական անասնեղենս և զրաթաբեր այգի մի։ Աւազան մկրտութեան վկային քարապատ՝ կից նորին ևս մի աւազան կոփածոյ քարամբ, ջուրն բարեհամ և ականակիտ. յանախեն յաղբիւր անդր ուխտաւորք բազումք։

« Ընդ'ի վանացս քառորդաւ միով ցուցանեն Ղշլաւ քաղաք'ի վերայ կիսարոլոր լերին մոյ՝ տեղի բնակութեան և հայրենիք սրբոյ վկային, ուր դեռ ևս երևին հիմունք պարիսպի քաղաքին, և ծծամեծ բեկորք կիսաշաղախ որմոց նորին, եթէ 'ի բաղում դարուց հետէ աւերումն կամ կործանումն այսր քաղաքի։ Ի ստորոտ այսր լերին են այդիք Օարդարիչ գեղջ։ Վիճակ սրբոյ Մենասանիս են յնտագայք։

« Ղոդէ, տունք հայոց 325. ջուրն գյարմարաւոր եկեղեցի, այլ զհին փոքր մատուռն մի և փայտեայ գաւիթս. ուր կատարին զհատարակ ժամերգութիւնս՝ յանցեալ ամի քահանայք 7. բայց այժմ բարեբաղդաբար 4 . . . . . .

« . . . . . .

« Մուսին, տունք հայոց 72։ Գիւղ վանք 150։ Գոմք տունք 152. քահանայք 6 . . . ։ Ընդցիկ 67։ Շամուշին 52։ Ղօմէլի 25։ Ուռղիկ 61։ Ընդիմլոյ 33։ Գրաչ 30։ Լչեմլիկ 20։ Լիսոր 132. եկեղեցին տարօրինակ։ Մաղուր օղլի 52։ Հարուսին 172։ Կէնենդիկ 25։ Օարդարիչ 52։ Լչմ 163։ Շխաճի 150։ Մարիղամիշ 110։ Մարդենիկ 22։ Գանաղամազ 34։ Սարբրցիկ 20։ Գուրբթիմրզայ 10։

« Նովք կամ ըստ Շնորհալոյն ծովք գըղնակ (այժմ գեօլճուկ) հայրենի կալուածք Շնորհ. 'ի սահման Խարբ. և Ընդն՞ոյ, անուանի, նա ցանկալի իսկ վասն գոլոյ տեղի բնակութեան Գրիգոր կաթող. եղբօր Շնորհ. հեռի'ի Խարբերդ քաղաքէ վեց ժամուք'ի հարաւոյ կուսէ նորա. չրջապատ ծովու չափի իբրեւ 14 կամ 15 ժամուք. խորութիւն ծովուն սաստիկ. ջուրն դառնահամ, ունի զանուահամ ձկունս՝ (զորս խատուտ կոչեն). հին աւուրց ծերունիք պատմեն զոլ 'ի նմա ձիոց և ոչխարաց. ունի և զփոքրիկ կղզեակ մի՝ յոր երբեմն երեց եղբայր Ս. Շնորհ. փոքր վանքայսէր Պաշխա. կառոյց զմի փոքրիկ եկեղեցի սուրբ Աշխան անուն և կաթողիկոսարան, թեպէտ զկնի ժամանակաց գաղթեալ անտի բնակեցաւ 'ի Հռոմկլայ։ Այլ անդ՝ կղզին և գիւղ ինչ ցաւուրս ցայսոսիկ. 'ի բարձրանալ ծովուն և կալնուլ մինչև ցեկեղեցին, ստիպեալ ապա ժողովրդոց տեղւոյն հրամանաւ մարմնաւոր կառավարութեանն եկեալ յեղը նորին շինեցին իւրեանց զուունս և արարին օրինաւոր գլաան։ (Ջ ուրք ծովուն օր ըստ օրէ սառուելոյ սկսանի, որպէս և պատմեն բնակիչ ծերունիք'ի յիսուն կամ վաթսուն ամաց հետէ այսր 17 կամ 18 կանգնաչափ բարձրացեալ ունի՝ առաջին հաւատիք սորա՝ կալնուլ ջրոյն զգիւղն բոլորովին մինչև դուն ինչ մնալ 'ի ծածկել գլխովին զկղզեակն, այսու մակարեր։

Ի սոյն ախտ, ցաւովք յոյժ տանիք, և զհոգեւորականս ոմանս ոչ միայն տեսանեմք դրթեալս, այլև 'ի հաւատոցն յոյժ վերջանալս. որոց պարտիք ոչ «Զգուշանալ գիտութեան» այլև զժողովուրդն ևս յԱստուածգիտութիւն կրթել. զի «մի տնօրէնութեան իւրում մեռցի, և արիւն նորա 'ի ձեռաց նոցա խնդրեսցի։»

Եւ այսպէս քաղցրայոյժ ենթադատել, զի ոչ միայն զհաւատարիսն գիտասցեն, այլև հաճիկ ևս անշուշտ առ հոգևորականն գիցեն, առնել իւրաքանչիւր ձեռնարկ հաւատոյ յանձին՝ և յաշակերտելոցն պէտս 'ի շինութիւն ազգի զի անդեցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ։ Յովհ. գ. 45։

Բանքի՝ զինչ պարծանք պնդիսուն։

ԱՌԱՆՑՔԱՆԱՆ

Արժանապատիւ տէր Աբել Մխիթարեան գիտնական վարդապետը Լչմիածինէն հեռանալ նամակը քանիմը ժամանակէ հետէ (ինչպէս սր թուականէն ալ կ'երևի) մեզ ուղարկած էր։ Բայց ձախողակի գիպուածով մը նոյն իսկ նամակը այս օրերս միայն առինք և մէջը յիշուած Աչքաբաղեան Ստեփանոս Պարոնեանի Կանչաքանոնիանը և Բրիստոսեանին Յառաջքանոնիանը զատ պատարանով մը ուրիշ բարեկամի ձեռօք նամակէն շատ առաջ ձեռքերնիս հասաւ։

Կանչաքանոնիանը արդէն շարաթագրիս միջոցաւ հրատարակած եմք և կը ցանկամք որ շնորհափայլ տէր Աբել վարդապետը բուն գիրքն ալ բանասէր հասարակութեան հաղորդէ և կրկին երախտապարտ ընէ հայոց ազգը։ Որովհետև յիշեալ Սաղաքրոնիան պատուականութեանը ամենևին չեմք կրնար երկրայիլ, երբոր գիտնական յօրինողին հրմառութեանը և ազնիւ ոճոյն միտ դընեմք և չը մոռնամք թէ Այրարատեան Ներսէսը կենդանի աչօք տեսած և քննած է։

Այսօր նոյն նամակն ու Բրիստոսեան գրքուկին յառաջաբանութիւնը արժանապատիւ հեղինակին խնդրանօք և մեր յօժար կամօք հրատարակելով՝ կը հրաւիրեմք բարեպաշտ ազգասէրները որ այսպէս ամենահարկաւոր դպրոցական գրքին տպագրութեանը համար կարեօք չափ օգնեն շնորհափայլ Աբել վարդապետին, ուսկից երկու տեսակ օգուտ կրնայ ծագիլ ազգիս համար։ Նախ՝ այն որ մեր սիրելի զաւակունքը ուսումնարանաց մէջ դիւրին ճամբայ մը կը դտնեն քրիստոնէական հաւատոց վարդապետութիւնը սորվելու. և երկրորդ՝ այն որ արժանապատիւ հեղինակը քաջալերութիւն ստանալով՝ ուրիշ ազգօգուտ հեղինակութեանց ալ սիրով ձեռք զարնէ։

» Արդոյ Տեարք Նոյեան Ընտանոյ։

» Յառաջ քան զայս խոստացեալ էի յարգութեան Ձերում առանձինն մատուցանել զանասիրական ինչ 'ի նիւթ Նոյեան Ընտանոյ՝ զորոյ այժմ։

» Ետզհետէ փութացեալ 'ի կատար ածել զառ ձեռին իմոյ զՍաղաքրոնիան Այրարատեան Նահանգի, զորոյ դեռ զկարևոր թերթն ժամանակին է լցուցանել, զԱնչաքանոնիան նորին քաղուածով ընդօրինակեցաք 'ի տպագրել զԱշանն Նոյեան և 'ի հրատարակել 'ի լոյս առաւելապէս վաստակաւոր Ուխտին Մխիթարեան գերապատիւ Հարց։ որք որպէս և անդ նշմարի, 'ի ձեռին ունին յաշխատութիւն զնորոգ աշխարհագրութիւն զՀայաստանեայց մերոյ աշխարհի։ որպէս զի տարբերութիւնքն 'ի նմին յիշատակեալ՝ յանականատեսութենէ Հեղինակացն մի ապրդեսցի 'ի Նոցին վաստակս երկոց։ որով և ընդդեմ երևիլ նախնի հեղինակաց Ազգին։

» Իսկ զԱնչաքանոնիան Բրիստոսեանին իմոյ զոր եդի 'ի նամակիս, խնդրեմ հրատարակել յայն սակս, մի՝ զի նախանձ բարի ընկալայ 'ի ժամանակին և յապա՝ յուշիկ

դիտաւորութեանց վարժապետիս՝ իւրովն գործնական պիտոյիւք առ իսն շարժմամբ. և երկրորդ՝ զի ընդ հրատարակիլ յառաջաբանին այնորիկ հանդիսացին գուցէ ցանկացողք արպագրութեան մասանցն 'ի դիւրութիւն դպրոցական ուսմանց, և առաւելապէս ինձ այնմ վստակողի, որ ցարդ ևս յարկղ և 'ի գզրոց պահովեալ զայն, զկնար նորին տպագրութեան ոչ բերեմ 'ի ձեռս։

» Արբաթոիշ Նոյեան Ընտանոյն միայն եր վիճակեալ այս հնար առնել դիւրահեշտ. և մաղթել զԱզգասէրս և զԲրիստոսասէրս զի Բրիստոսասէր հոգւով առիսն կարեկցութեան՝ զիմ Բրիստոսական տացեն 'ի լոյս 'ի փառս Բրիստոսականս Հայաստանեայց եկեղեցւոյ։ և քրիստոսահիմն մերոյս հաւատոյ յուզչափառութիւն. և զնոսն գրաւել 'ի սպառ Նոյեան Ընտանոյ։ զշիւղ աւետեաց զԱյրարատեանս Աշխարհի զարդեան վիճակաց և զՆոցն նշխարաց մատուցանել նմա միշտ 'ի լուր հաստատութեան։

» Ողջ լինել և ազգասիրել մաղթեմ իմոց Ազգասիրաց. և մնամ յարգի Տեարց 'ի յաջողուածս ձեռաց՝ միշտ առ Տէր աղօթարար։

25 օգոստոսի 1852

Ս. Լչմիածին։

Խ. Հ. Աբել Վարդապետ Մխիթարեան

ՑԱՌԱՔԱՆԱԲԱՆ

Որոց ներկայ զԵւրոպացւոցն զկիրթ ախորժակս յօդուտ փաստից յազգասիրութիւն անդր 'ի վեր հանեն, այս բանք են նոցին յաւետ բանաւորք, թէ՝ առ 'ի հաւատոցն գրուածք չեղեն Եւրոպացւոցն լուսաւորութեան առիթք առ ժամանակաւ, յորում զերաշխեպ վնասակրեալ Մխիթարն եկեղեցւոյն Բրիստոսի յաւետ յերկպառակութիւնսն հերձաւ, քան հաստատեցաւ 'ինքն։ Այլ ջանք նոցին եղև յարուեստս պեղոէս մակացութեան զազգն կըրթել զազգասէր ոգւով, որովք կանգնեցին զայժմու լուսաւորութիւն յաշխարհի։

Այս ենթադատութիւն նոցին եղև. որ պակասեցոյց երամախումբ մանկտոյն 'ի հաւատալիսն հմտութիւն. իբրու յետագոյս 'ի միտն գրել զուղիղ դաւանութիւն հաւատոյ հարցն սրբոց։ Ոչ քա են, որոց չև ևս ուսեալ զԱստուածային գրոց զգրութիւն, համարին զանձինս յազգիալգեանցն գիտութեանց 'ի պրակսն անցեալ. և որոց 'ի Ասուս կամ Մինգրելիայս և 'ի Գաղղիացիս են քաղաքացեալք՝ 'ի նոցին լեզուս պանծան, և ընդ միմիանս լինել հայալարբառք համարին ամօթ. յոյս միտ և յազգային դաստիարակութիւնսն դատապարտեցան։ որոյմ ոչ հաւատալք երբեր, եթէ և առ մեզ չէին այնպիսիք. բայց զայն գիտասցեն, եթէ Եւրոպացիք որոց օրինակքն պարծին, նախ քան զամենայն դաստիարակն զմանկունս 'ի հաւատոյն գիտութիւն, և բաղումք ևս ջանին 'ի միրութիւն զերեխայն, չև լեալս գիտակ հաւատոց, զի ցանկան յաւետ գիտել նոցա զդաւանութիւն հաւատոյ, քան զծնողս կամ զկնքահարս առ սոյն երաշխաւորել։

Ի սոյն ախտ, ցաւովք յոյժ տանիք, և զհոգեւորականս ոմանս ոչ միայն տեսանեմք դրթեալս, այլև 'ի հաւատոցն յոյժ վերջանալս. որոց պարտիք ոչ «Զգուշանալ գիտութեան» այլև զժողովուրդն ևս յԱստուածգիտութիւն կրթել. զի «մի տնօրէնութեան իւրում մեռցի, և արիւն նորա 'ի ձեռաց նոցա խնդրեսցի։»

Եւ այսպէս քաղցրայոյժ ենթադատել, զի ոչ միայն զհաւատարիսն գիտասցեն, այլև հաճիկ ևս անշուշտ առ հոգևորականն գիցեն, առնել իւրաքանչիւր ձեռնարկ հաւատոյ յանձին՝ և յաշակերտելոցն պէտս 'ի շինութիւն ազգի զի անդեցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ։ Յովհ. գ. 45։

Բանքի՝ զինչ պարծանք պնդիսուն։

ր։ Բեմամբ առանց կարծեաց՝ տարածութիւնն ևս ընդ լայնեալ իցէ։ ուստի եթէ մեծագործ և առատաձեռն մարդոյ կամ իցէ 'ի հիւսիսային կողմն ծովակին բանալ կամ շերտել ըզլեառն, ունիցի անտարակոյս օգուտ մեծ քաղել զդաշտն ջրարբի առնելով յաւելացուցանելով 'ի վերայ զվարելահողս և զդիւղատեղիս)։ Ժողովուրդք աւանին աշխատութեամբ իւրեանց բաւականաչափ կարեն հոգալ զպիտոյս իւրեանց՝ վասն որոյ գոհ են այժմ զկառավարութեանց իւրեանց քան յառաջն 'ի ծովուն։

« Օրկեղեցի կղզւոյն քակեալ զգերանս և զայլ ատաղձ հանեալ արտաքս՝ շինեցին զնոր փայտեայ եկեղեցի բայց գեղեցկակազմ։ Բրձանագրութիւնք քարանց հին եկեղեցւոյ կըզկղզոյն անվերծանելիք են և 'ի տեղիս տեղիս եղծեալք և խաթարեալք։

« Օսուրբ Նշան խաչի յիշատակեալն 'ի կոնդակս հին կաթողիկոսաց ցուցանեն սոքա դեռ ևս անդ յիւրեանս, ուր խուռն բազմութիւնք 'ի հեռաւոր վայրաց դիմեն յուխտ և յերկրպագութիւն, որպէս և մեք փութացաք 'ի նորին երկրպագութիւն, բայց 'ի հարիւրաւոր ամաց հետէ անմերձ յումեքէ՝ մի միայն ըզպատուանդան խաչին ապային երկրպագանել և անհնար մերձիլ 'ի նա ասէին, բազմաթիւ ծածկութիւ սքողեալ գոլով խաչին։ Ակամեցեալ իմ կուրօրէն զջերմեռանդութիւն ցուցանել՝ յառաջարկեցի ըստ թովմայի՝ չերկրպագից՝ եթէ ոչ տեսից զիսկութիւն իրին։ Այնժամ ոմանք խոհեմագոյն ծերունիք պատմեցին զամենամեծ պատուհաս ինչ, ա թէ ոմն 'ի վարդապետաց յանդգնեալ կամեցաւ տեսանել ըզխաչն, անդէն առ խաչին աւանդեաց զոգին, և այնպէս հաւաստի պատմութեամբ՝ իբր ականատես իրացն եղելոց, միանգամայն կարեկցեալ ընդ իմն տարաբաղդութիւն։ Տեղի լատուեալ նոցին տրամաբանութեանց սկսայ ևս պնդել զիմ նախկին առաջարկութիւն։ ուստի ոմանք չարամաղթութիւնս կարդային՝ ըստ վարդապետին և ինձ հասանել պատուհասից, և ոմանք ևս խորհեալ ընդ քահանայից արտաքսել զմեզ արհամարհանօք 'ի գեղջէն կամէին։ Այսպիսի պարզմտութեան ենթադրութիւն տեղի գտեհկութեան նոցա տուեալ՝ և զտխմարութիւն նոցա հնարիւք իմն մեղմեալ, ամբաստ բանիւ խօսեցայ ընդ աւագանիս նոցա, «դուք 'ի հանդիսի կացջիք (ասեմ) և թոյլ տուք ինձ բանալ զսուրբ Նշանն, եթէ մեռայց կամ վնասեցայց այժդ այդ ինձ գլխովին, և ձեզ ոչինչ մեղք։ իսկ եթէ բացից կենդանի հաւատով և աչօք բացօք տեսեալ երկրպագջիք, և 'ի հաւանեալք, բազմաց կուզէ 'ի վերայ եղեալ 'ի ջերմեռանդ բնակչաց, և այսպէս անդ և ասա տրըտմալի շինութիւնք, դրութիւն քաղաքին երկայնաձև ընդ մէջ ձորոց զրեթէ շրջապատեալ լերամբք։ Գոն ասա քանի մի . . . . . ուխտատեղիք, քանզի իւրաքանչիւր բարձրաբերձ լերանց անուանս դնելով՝ . . . . . , 'ի կիւրակէս . . . . . անյուշ սնեն ըզժամանակն . . . . . ,

« Ցորոյ ստորոտ քաղաքն շինեալ անուանեն սուրբ Սարգիս։ 'ի քաղաքէն ելանեն դէպ 'ի հիւսիս աճենագժուարին ճանապարհաւ ընդ ապառաժ սիրտ լերինն գնալ սկսանին ընդ զառ 'ի վեր՝ որ միայն տեսողք զաջհոգեալ սարսին, ընդ այնպէս տաժանելի ճանապարհորդութեամբ ժամանեալ 'ի վեր չգտանեն անդ և ոչինչ՝ միայն սենեկանման այր մի՝ և 'ի սիրտ այրին երկուստեք բոլորաձև երակ կանաչ վիմաց՝ զորս ասեն տեղի պայտից երիվարին սրբոյ զօրավարին։ Գնան ուխտաւորք մոմով և խնկովք . . . . . ։ Յանդիման քաղաքին գոյ նմանապէս բարձրաբերձ լեառն մի՝ զոր սուրբ Յղեայի լեառն քարոզեն, ասա ևս բաղում ուխտաւորք դիմեն . . . . . չիք անդ ոչ մատուռն, ոչ եկեղեցի, այլ փոքր հնձանանման ինչ քանի մի առանց շաղախոյ քարամբք հիւսեալ, երթևեկ ուխտաւորք ոչ պակաս քան զուխտաւորս սրբոյն Սարգսի այրին . . . . . Յարևմուտս քաղաքին գոյ բարձրագոյնլեառն մի ևս՝ սուրբ Յովհաննէս անուն յանուանէ մատրան զոր 'ի լերին կառուցին յոյնք, ասա ևս ընթանան մերայինք հաստատացուցանել զսատարաղդիս։

Ի Բազաքին գոն երկու պայծառ եկեղեցիք հայոց՝ փոքր ինչ անշքացեալ յառաջին հարստութենէն 'ի նուազութենէ ժողովրդոց։ օր ըստ օրէ ժողովուրդն որպէս թուով նոյնպէս և հարստութեամբ 'ի յետոյս ընթանայ։ մերայինքն ամենայն յարգեստս և 'ի վաճառականութիւնս պարապի բայց սակաւ շահաւետութեամբ, ... ։

« Եկեղեցի մեր առաջինն անուանի սուրբ Աստուածածին, արդարև տաճար զարմանալի կանգնեալ 'ի վերայ վից սեանց և բաւական արծաթեղէն կահիւք զարդարեալ։ բայց աւաղ սա ևս ընդ ժողովրդոցն յառաջին պայծառութենէն խոնարհի աւուրց յաւուրս։ ունի զերեսս պայծառ. սենեակս յառաջնորդարանին, բայց ուր . . . . ունի զոտարանոց սենեակ մի և զարճանոց 'ի շուկային, սակայն փակեալ և անգործ։ Ժողովուրդ եկեղեցւոյս մինչ ց150։ Երկրորդ եկեղեցին՝ յանուն սրբոյ Կարապետի՝ սա ևս է չափաւոր եկեղեցի ունի ց50 տուն ժողովուրդս և զմի քահանայ։ վերիս սեղանս՝ աջակողմանն յանուն սրբոյ Կարապետի Աստուածածնին՝ ձախակողմանն Լուսաւորիչ։ խաչակոք գեղեցիկք և արհեստաձևք, մարմարք և ազնիւ։ բայց ժողովուրդք աղքատ յոյժ։ եկեղեցին 'ի վերայ ջրոյ ոսանց՝ փայտայարկ՝ սակայն որմունք կրապատ։ 'ի ներքս յեկեղեցին ըստ հին սովորութեան շրջապատաբար վասն կախելոյ յաւագ աւուրս զկանթեղս 'ի պայծառութիւն տաճարին։ զմի դուռն ի արևմուտս և ընդ ճակատ դրան պատկաձև ծաղիկ և 'ի մէջ նորա (փակագիր) « Յիսուս » 'ի ներքուստ պատկին բոլորաձև գրեալ « ով որ ելցէ և մտցէ՝ իսկապէս ճարակ գտցէ » յաջակողմն դրան 'ի ներքուստ կողմանէ փոքրիկ խաչ « յիշատակ է սուրբ խաչս գեղաշէն Պապային յիշատակ օրհնութեամբ եղեցի և 'ի ձախակողմն նոյն ոյէս խաչ և 'ի վերն (փակագիր) « սուրբ Կարապետ » ։ Ի ճակատ աւագանին խաչ՝ և 'ի վերայ նորա (փակագիր) « սուրբ խաչ » 'ի ստորև խաչին « յիշատակ է սուրբ աւագանս Երփիարեանց աղախին մէսի Հոնիփսիմեն։ »

» Բուսաքուստ ընդ ճակատ դրան նկարեալ կան յաչ և յահեակ հրեշտակք՝ որք ընթուղթ ինչ ընդունելք 'ի ձեռս և 'ի կնդրոնին թագ՝ 'ի ստորև թագին գրեալ « տուիք մեռելք 'ի դատաստան » իսկ 'ի թագին որ 'ի ձեռս հրեշտակաց « սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց » յարձանագիրս յիշատակարանին գրի այսպէս « ժամանակս իմ տարւոյ հաշուիս հայոց թուիս հիմնեցաւ սուրբ Կարապետս գեղեցկաշէն եկեղեցիս հրամանաւ նորին Սելիմ մեծաղօր Սուլթանիս, վեզիրութեամբ Լուսուֆ փաշայ կոչեցեալ էֆէնտիս, ձեռամբ մեծի Փիլիպպոս պերճապատիւ Ամիրայիս, մահտեսի Յակոբճան եղբարն արդի, որ 'ի Կոստանդնուպոլիս, սոցին ծնողացս և հանդուցելոյն տուք զողորմիս Աստուծոյ ամիրային, թոռրվանտե ընդ սուլթանին, զԱրութենին, և Կարապետին, Աստուծոյ սոցին զորդին Օարփիարեան ցանկալի հանում Օաքարին և Գասպարին ժողովրդովք հայոց ազգիս՝ որք էին 'ի ժամանակիս, զնի հրկիզութեան սուրբ Կարապետու եկեղեցիս վերսին նորոգեցաւ վասն հոգւոց Երփիարեանց Սկրտիչ Ամիրայն թոռրվանտե խաթունին, սոցին որդւոյն բարեհամբաւ Փիլիպպոս Ամիրային և մէջի Յակոբ Ամիրային և կենակցոյն մահտեսի Մեվլիքան և Սրբուհի խաթունաներացն, այլ և զաւակացն Սկրտիչ արփիարի մահտեսի Մանուկ Օաքար . . . և Կարապետ Աղայիցն 'ի տեր հանգուցելոց՝ որ և զանձն պաշտօնեայ Աստուծոյ անուանել, և զաստուածային պաշտօն ոչ գիտել։ քահանայ՝ և զքահանայութեան խորհուրդն անգիտանալ։ Զէ հովիւ քաջ այնպիսին, որ զանձն 'ի վերայ ոչխարացն դնել խոստացաւ, այլ վարձկան, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրև տեսանէ զգայլն զի գայ, թողու զոչխարսն և փախչի։ »

Պայծառանալ պահանջեմք ազգիս ըստ լուսաւոր ազգացն կրթութեան, այլ ընդ նախակրթութեան դուռն ելանել ոչ կամիմք։ ընդ որ գայլն մտանէ, յափշտակէ զոչխարսն և ցրուէ։ Յովհ. Ժ. 11. 12։

Սակս այսորիկ զերկրորդ հատոր գործոյս կազմեցի։ յիւրաքանչիւր խնդիրսն ճոխանալով յասացելոցս յաւէտ լուսաբանութիւն, իսկ յոր ինչ նպատակ մատեանս ողջոյն՝ այն յառաջիկայդ։

Այսպէս՝ այս էր որ զիսն հարկեցոյց ամօք յառաջ բերել յայս վաստակ։ ուրանօր արդեօք իբրև անկերպարան երկ ինչ պարապմանս 'ի ձեռին ունէի հետ զհետէ 'ի կատար ածել։ զի յորժամ յամին 1837 դաստիարակ էր իմ 'ի Լեսարաբիա հարաւային Ռուսիոյ ուսումնական դպիրն Սաեր Գրիգորեան Օմիւռնացի, նորա ունելով երկասիրեալ 'ի ժամանակին Կըրթութիւն Աբետարանական անուանեալ, ոչ ծածագոյն քան զսոյն աշխատութիւն մեր, իբրև իշձ եղէ ըստ աշակերտացն օրինի զոյգ ընդ իմոց օրական դասառութեանց՝ ընդօրինակել զայն յիմ պէտս, խղճեաց գուցէ ոչ հրբէք՝ անցանել զուսուցչացն օրինօք ուսուցիչն իմ Բրգոյ՝ առնուլ զայն 'ի ձեռաց իմոց թողլով զաչս զհետ։ և զարտագրութեան իմոց երկս յումպէտս աբարեալ ոչ ինչ առաւել, բանաւոր պատճառ քան զայս՝ առաջի եդեալ, թէ՝ « կին յորժամ ծնանի, կամի զծնունդ կատարեալ ծնանել, և ոչ զվիժած տարաժամ », այլ մեր հոգւով յայն իշձ հարեալ։ այն է, 'ի հաւատաքան գիտելիս 'ի ժամանակէն յայնմանէ ջան էր իմ կազմել զայն մատեան, թէև երկհատոր ըստ նորին ձևոյ, այլ ամենեին անմատ նմին։ որ և Տեառն գործակցութեամբ յաջողեալ ինձ վաղուրեմն, վաղվաղեի մատուցանել 'ի տիպ։ չեւ ևս նորին երկասիրութեանն երևեալ 'ի լոյս։

Եւ վասն զի՝ զայսպիսի պատճառ աշխատութեանս տալով մեր։ մերթ էր տեղի տալ կարծեաց ընթերցանելեաց իբր 'ի շաւիղս ուսուցչին մերոյ գրոցն գնալ։ կամ ըստ գլխակարգութեանցն։ կամ ըստ նորին բանից 'ի բանս մեր խօսել։ առ այդ և զայն յայտ առնեմք առ 'ի կարծեաց նոցին փարատումն։ զի իբրև ձեռնասնայն 'գտայ յընդօրինակութենէ մատենին։ ուխտ եդի և ամենեին անօրինակ այնմ զաշխատութիւն իմ գործել բաց 'ի նիւթոցն վերաբերութեանց 'ի հաւատոցն բան։ որպէս 'ի վեր երևեսցի այս ամենայն յիւրաքանչիւրոցն տպագրութիւնս։ զի մատեաննորա հիմնեալ էր 'ի վերայ երից աստուածաբանական առաքինութեանցս՝ Հաւատոյ, Յուսոյ և Սիրոյ։ ոչ համառօտութիւն շրջեալ 'ի նորոգ անուանագրութիւն՝ Հրահանգ քրիստոնէական հաւատոյ, տպագրեալ տեսաւ 'ի Մոսկուա Ռուսաց անագան ուրեմն 'ի 1850 ամի, յորում խոստանայ և զընդարձակն։ Իսկ մերս այս վաստակ հիմնեալ 'ի վերայ երկոտասան մասանց հաւատոյ որ 'ի Նիկիայն սահմանեցաւ ըստ երկոտասան առաքելոցն բանից՝ բաժանեալ է յութեւտասներորդ գլուխս 'ի գիրս երկուս։ առաջինն հարցուապատասխանեաւ, և երկրորդն արձակ շարագրեալ։ որում եթէ Տեառն կամք իցեն տեսանել 'ի լոյս, տեսցէ և ամենայն ոք։

Երկրորդ՝ ձեռնարկել մեզ 'ի հմտութիւն քրիստոնական հաւատոց։ հարկ անհրաժեշտ էր մեզ՝ Հրահանգն անուանեալ քրիստոնէական վարդապետութեան, անխոնջ յաշակերտացն ձեռս՝ յոսս դաստիարակացն դպրոցաց աշխարհիս մերոյ 'ի Ռուսաց մասին։ Երկ թարգմանութեան ուսումնական վարդապետին Ալամդարեանց հանգուցելոյ, այլ ոչ արդիւնաւոր 'ի հրահանգս հաւատոյ ըստ արդիւնաւորութեան անուան թարգմանչին, որ բազմաք թերի 'ի հարկաւորացն գտաներ, և յոյր 'ի հաւատոցն վերայ խնդիր ցայս վայր եկեղեցիս յաջի քրիստոնեից՝ անիշատակ յեջսն ամենեին, ապաստան թողեալ 'ի դասատուացն մեկնութիւնս։ յորոց շատք՝ է, զի զուրկք։ և է, զի չեն իրը այն՝ ձեռնհասք զի դասատուն յանդգնաբանական անդ խնդիրսն խանջն ոչ սակաւ ապացուցանել զիւրաքանչիւր պատասխանիս յոսկեղէն գրոց հարցն սրբոց։ յորոց շատք անգիւտք են, և շատք 'ի ձեռագիրս, որոյք դիւրաւ իմն մարթ էր վերոտնել ուսանելեաց 'ի խնդիրսն, կամ լաւ ևս, մերոյք զմերսն վարժել յաւէտ կամեցեալ։ առանց որոյ հարկ լինի դասատուաց 'ի թերթս թերթս թղթոց առ իւրաքանչիւր հարցմանցն պատասխանիս՝ ընթերել զմեր վարդապետացն բանս պատրաստական 'ի ձեռին։ զՆերսիսի, ասեմ և զՍարգսի շնորհալւոյն, և զորոց այլոց 'ի նոցին կարգի։ Լոնջին և աշակերտք այր կամ առ 'ի չգոյէ հարցն մատենից կամ ձանձրոյթ վարժապետացն կալով յրստէպ հարցաբանելն։ թեզում և որ մարթ զնոցին մասանս՝ առ որս յաշակերտացն անընդունակս բանի լոկով ասութեամբ, զորոց զեռանդն ուսման շիջուցանեն՝ ոչ սակաւ, այն ինչ ընդ ակնկալութիւն յօրինակացն գիտել՝ պատասխանին կերք։

Ի սոյն նպատակ աւանդեմ իմոց համալսարանաց զայս իմ երկ 'ի Հմտութիւն Քրիստոսական հաւատոյ զի ընդ լսելն խրատանչիւր պրակացն դասս յառաջնումն, 'ի հաւատոն երկրորդ՝ զերոց վարդապետացն ուսցին զուղղափառութիւնս առանց ձանձրոյթի առ վարժապետն կալոյ։ զի արդարև յանդիւր ըմբռնելիսն մոտաց և յաչաց անտեսանելիս առանց օրինակի սլանալ՝ ոչ դիւրին ինչ է։

Օառաջնագիր մատենիս 'ի հարց և 'ի պատասխանիս համառօտեցի։ և զերկրորդն յարձակ շարագրեալ, հարցն եկեղեցւոյ զհետ ընթացայ։ ըստ հասանելոյ 'ի ձեռս առ 'ի նախնեացն մատենից հաւատաճառ եղելոց։ յորս եղև մեզ պարապել և աւանդել ուսանելեաց։ և զգլուխն 'ի նոյն երկրորդում մասին։ յորս աւելի ուշադիր լինել հարկ էր, կրճատեալ ըստ տեղւոյն և ուրեք երկարեալ, զայնս 'ի վերայ վիմի հաւատոյ հաստատեալ, զոր դրունք դժոխոց մի յաղթահարեսցեն։

Ի վերջոյ ծքսականս՝ չերկարեցայ ստէպ, որովք յառաջնոց դարուց դրդուեցաւ եկեղեցին, և ոչ իսկ 'ի վիճաբանողաց միոյ կամ միւսում հակեցայ 'ի կողմն, Պողոսի կամ Աստղոսի հաւատսն անցեալ։ զի այնոքիկ թէև այլևայլ շաւղաք, այլ 'ի մի և 'ի նոյն հաւատն հային Քրիստոսական։ զոր տընկեաց Պողոս, և ջրեաց Աստղոս։ և զի՝ « Օրն Քրիստոս դաւանեմք, և 'ի մի շաւղաց վերայ հետևիմք։ և յիրերաց ճանապարհորդակցութենէ (ընդէր) խելագարեալ դարհուրիմք »։ Լամբ։ Յտեն։

Որ ինչ յառաջնումն երկարել էր 'ի դէպ զայն ամենեցաք 'ի հատորն երկրորդ։ և վասն այսորիկ զայն ինչ զոր յառաջինն եդաք ըստ կարգի, զնոյն ընդարձակ կալաք և յերկրորդն։ և զի՝ աստուածաբանք ներկայ դարուս առ 'ի դիւրընտել առնելոյ ուսանողաց զաղմահատոր խնդիրս՝ աստուածաբանական՝ ամփոփեցին զնոյն 'ի դպրոցական Աստուածաբանութիւնս, զնոցին և մեք կարաք զատիլ։ զյաւէտ բացայայտելիս և զվիճաբանականսն յերկրորդ գիրս կարգելով առանց վիճաբանական ոգւոյ։ յանձնիւր 'ի գլուխն յաւէտ ճառագիր երևեալ, քան թէ վիճաբան։ միայն զի դիւրընտել համազգեաց իմոց եղեցին աստուածաբանական խնդիրքն կոչեցեալ՝ ըստ ուղղափառութեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ։ « յոր մասանէ իմ 'ի գլուխ հանդիսի մեկնութեան բանի, նախաժամանեսցէ առ իս գթութիւն սուրբ Հոգւոյն, խօսիցի յիս զարժանն և զպիտանին և զՀայրն իւր 'ի ժամանակի 'ի փառս Ն'ի գոլիսա Աստուածաբանեան իւրոյ։ և 'ի լուսաբանութեան կանթողիկէ Եկեղեցւոյ »։ Գարիկ։ գլ։ Ցն։

շնորհիւ արդեամբ և աշխատանաւք մահտեսի Գասպար Ամիրան, և Պօղոս, Աւետիս, Ստեփան, Օհաննէս, Պաղտասար, Մարտիրոս, Փիլիպպոս, Խաչատուր, և Թէլովբէ կամ Օհաննէս, Զահրատ, մահտեսի Պետրոս, Արշակ, Յարութիւն աղնուական Աղջիցս վասն մեղաց թողութեան յիշատակեցաւ, յամի 1831։

«Արժանայարգութեանց Ձերոց մեամ իսկական պատուով և կատարեալ յարգութեամբ։ Ի։ Ղ։

Ի 13 դեկ. 1852 ամի Յովհաննէս Լորդոպէ
'ի Խարբերդ Ա։

ՋԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ

— Լոնտոնի մէջ 50 տարի է հետէ հաստատուած տպագրատան ընկերութիւնը մինչև հիմայ 5,462 տեսակ գիրք յօրինել կամ թարգմանել տուեր է, և 110 լանաչան լեզուներով տպել տալով՝ ասդիս անդին 576 միլիոն հատոր բաժներ է։

— Այս օրերս Վիտինի կառավարիչը հոս գող մը ըռկեց որ տասն հազար ղուռ արժողութեամբ գոհարեղէններով և ստակի մեծ գումարով մը յիշեալ գաւառի մէջ ձեռք անցեր է։

— Զորեքշաբթի տասներկու տարեկան երիտասարդ մը Վասըմ փաշա գողութիւն մը ընելով՝ ոստիկանութեան գործակալաց ձեռքը անցաւ։ Հարցաքննութենէն հասկցուեցաւ որ մոռուլէթիի մը հետ արհեստակից է, և շատոնց գողցուած բաներ ալ տուներնին գտնուեցան։

— Այս շաբթու մէջ շարագործ մը Պալաթիոյ հայ վաճառականէ մը անիրաւաբար տասն հազար դահեկան խնդրեց, չտալու ժամանակը մահ ոպառնալով։ Վաճառականը Պալաթիոյ ոստիկանութեան պաշտօնէին եկելութիւնը իմացընելով՝ պէաք եղած զգուշութիւնները 'ի գործ դրուեցան և շարագործը ձեռք անցաւ։ Ընոր խորհրդակից ընկերներն ալ կը խուզարկուին։

— Պէշիքթաշ բնակող քէֆալօնիացի խանութպան մը շորեքշաբթի օր Արարքէօյինաւամատոյցէն նաւակ կը հեծնէր, որ Պալաթիա դնած երկու տակառ շաքարը իւր խանութը տանի։ Հելլենացի գող մը նոյն ժամայն ճարպիկութեամբ խանութպանին գրպանէն եօթն հատ հարիւրնոց և մէկ քսաննոց ոսկի գողնալու վրայ էր, երբ տէրը գողին ձեռքը բռնեց և ոստիկաններուն յանձնեց։

— Կիրակի օր ալ քէֆալօնիացի մը բժշկի մը ծառային ծոցէն վիրաբուժական գործիքները գողնալով փախչելու վրայ էր։ բայց գողցած բաներովը ձեռք անցնելով՝ չարութիւնը չը կրցաւ ուրանալ։

— Երկուշաբթի օր նէապոլսեցի չարագործ մը իւր քալաքակիցներէն երիտասարդի մը դաշոյնի երեք հարուած տուաւ ու փախաւ։ Բայց հինգշաբթի գիշեր Ալէսիպ փաշայի խնամօքը բռնուեցաւ։

— Թարսուսի վիճակին կուսակալ Մեհմէտ Օիյա փաշային վրայօք շատ գովեստիւք կը խօսին այն Կոզմեքէն եկած նամակները։ Ճամբաները հարթելու, նաւամատոյցներ շինելու կը զբաղի, և բնակչաց գործերը արդարութեամբ գտնելու և աս կերպիւ զանոնք գոհ ընելու կ'աշխատի եղեր, որն ոչ կայսերական կառավարութեան պատիւ կընէ։

Բարձրագոյն տէրութեան ամեն գործակալները առատագութ Սուլթանին բարի կամայը համեմատ՝ այսպէս գոհութեան արժանի կերպիւ վարուելով՝ բնակչաց գոհութեանը և երջանկութեանը պատճառ կ'ըլլան։

— Յոյն աղքատաց օժանդակ ընկերութիւր իւր շնորհակալութիւնը հրապարակ ելեր կը յայտնէ Փիր Սթէֆանի Մավրօ Բօրտաֆոյին, որ իւր հարստանաց առիթովը հինգ հազար ղուռուշ շնորհեր է 'ի նպաստ կարօտելոց։

— Պէյ օղլու Վալիտէ էֆէնտի փողոցը յոյն քահանայ մը վարժապետութիւն կընէր։ Ընցեալ օրերը շնորհքով հագուած մարդ մը ասորտունը կերթայ իբր թէ քանի մը աշակերտներ իրեն կրթութեանը յանձնելու խօսք կընէ, ու պայմանները կ'որոշէ։ Յետոյ մը օր ետքը՝ յիշեալ մարդը աշակերտաց հայրն է ըսելով ընկեր մը կը բերէ քահանային որ մինակ նստած էր։ Տէր վարժապետին չարագործ այցելուները շիշ մը գինի կը նուիրեն որ խըմէ։ խեղճը դէմ կը կենայ, անոնք դաշոյնով կ'ըսպառնան։ վերջապէս ակամայ գինին համը առնելով վախուն բարձր ձայն մը կը հանէ ու նուաղեալ կ'ինայ։ Գողերը իսկոյն գոռծնին կը կողոպտեն ու կը փախչին։ Յետոյ մը օր նոյնը ոստիկանութեան գործակալները գլխաւոր գողը ձեռք ձգեցին։

— Յունաց գերապատիւ Պատրիարքը և Երևելի եպիսկոպոսունք շատոնց դիտաւորութիւն ունէին որբանոց մը շինելու, որ նոյն աղգի որբերը խնամուին։

Այս անգամ յիշեալ որբանոցը հին աղքատանոցնուն տեղը հիմնելու որոշեր են, և Յունաց ազգէն հաւաքուելու նպաստից ցուցակին գլուխը՝ Երուսաղէմայ Պատրիարքը 30.000, Կոստանդնուպօլսոյ Պատրիարքը 25,000 և նախկին պատրիարք Կոստանդիոս 15,000 ղուռուշ գրուեր են։ Այս առաքինական առատաձեռնութեանց մեր աղգին ալ բարի օրինակ ըլլալ կը ցանկամք։

— Ընցեալ հինգշաբթի գիշեր Պէշիկթաշ վաճառականի մը տունը գող մըտեր ու տանուտէրը շիմացած բաւական ոսկի, արծաթեղէն ուրիշ ծանրագին բաներ վերցունելով փախեր է, բայց այն գիշերը Պէյ օղլու գիշերապահ զօրաց ձեռքը անցաւ։ Նշեռնագործը Պալաթա Սէրայի ոստիկանութեան պաշտօնատեղին տարուելով՝ Ալէսիպ փաշայն կը հարցունէ թէ ձեռքի ծրարը ո՞սկից գողցաւ։ Վարպետ աւազակը կըսէ թէ Տոլմա պաղչէի ըլլակէն ելնելու ատեն՝ պառաւ կին մը զանիկայ իրեն յանձնեց որ ինք թեթեւութեամբ կրնայ վազել։ և թէ բլրուն գագաթը հասած ժամանակը պառաւ կինիկը չէ կրնար գանելու որ առածը ետ տայ։ Ուստի ինքը դող չէ կարծուելու համար իրը թէ ծրարը Ալէսիպ փաշային յանձնելու մտօք դէպ'ի Պալաթայ Սերայը կուգայ երբ զինքը բռնեցին։ Աղաճամիին կողմերը։

Այս խօսքերով իւր անմեղութիւնը հաստատելու կաշխատէր և կը սրանեղէր որ զինքը սխալմամբ շարագործ կը համարին։

Հաստատ մարդուն վրայ խուզարկութիւն ընել հարկ եղաւ։ և թղթադրամոց գումար մը գտնուեցաւ գուլպաներուն մէջ պահած (իւր խօսքով) որ գիշեր ատեն գողերը զինք չը կողոպտեն։ Բայց դժբաղդաբար ծոցէն ելած քանի մը կտոր ծանրագին զարդուց վրայօք ալ եղած հարցմանց այնչափ յաջող պատասխանի տալու անկարող ըլլալուն՝ անաչառ և խիստ հարցաքննութեան տակ ինկաւ։ վերջապէս ելելութիւնը խոստովանելու ստիպուեցաւ և գողերու վախէն ապահովութեանը համար ոստիկանութեան նախարարին դուռը ղրկուեցաւ որ աւազակաց բանտը հանգուցանայ, մինչև արժանաւոր պատժոյն վճիռը տրուի։

— Հէյպէլի կղզւոյն առևտրական ուսումնարանին անցեալ տարի պէտք եղած նորոգութեանցը համար յիշեալ ազգի բարեսէր անձանց շնորհած նպաստը 75,310 դահեկանի հասեր է։

— Ընցեալ հինգշաբթի գիշեր ժամը երեք չորսին աւեանները սաստիկ մրրիկ մը բրդաւ Կոստանդնուպօլսոյ վրայ և յատկապէս խռովեց նաւահանգստիս ծովը։ Հարաւային արևմտեան հողմը այնպիսի կատաղութեամբ կը փչէր որ նոր կամրջին Պալաթիոյ կողմանմասը հոսանաց ուժովը տեղէն զատուեցաւ, և ջուրերը որ սովորաբար դէպ 'ի վայր կը հոսին, յիշեալ մրրկին ղօրութեամբը նոյն գիշերը արագութեամբ դէպ 'ի վեր ընթացան։ Ուստի կամուրջին զատուած մասն ալ նաւահանգստին մուտքի կողմը քշուեցաւ և անցուդարձի տուրքը ժողվողին խուցը խորտակեցաւ։ Խարսխած նաւերուն բոլորն ալ ալեկոծեցան և խարիսխնին քշելով մէկ ծայրէն մինչև մէկալ ծայրը իրարու զարնուեցան։ բայց բարեբաղդաբար ծանր վնաս մը չը պատահեցաւ։

Հետևեալ օրը մեծ ծովապետը կամուրջին վրան գնաց ու արքունի նաւարանէն մէկ շատ գործաւորներ բերել տալով՝ զատուած մասը տեղը դնել տուաւ (որն որ քիչ ժամանակի մէջ կատարեցաւ) որպէս զի վերափառ Սուլթանը կիսաւուր աղօթից հետը Մէկիթէն դառնալու ատենը կրնայ կամուրջէն անցնել և ժամ յառաջ ժողովուրդները հանգիստ և ապահով անցուդարձ ընեն։

— Թալիֆօրնիոյ ոսկի հանքերը բանելու համար յիշեալ երկիրը գնացող Չինացիք, այս անգամ Լոունկվա ըսուած չաստուածնուն անունով աղօթատեղի մը շիներ են և մեծ հանդէսներով ու զարմանալի խաղերով՝ աւարտման օրը տօնախմբեր են։ Նոյն աղօթատեղւոյն դիմացն ալ Թատրոն մը հաստատեր են։

— Մոսկուայու մէջ Լօրկի Թոսթանթինոս հաշի Թօնթա անուն բարեպաշտ յոյն մի մեռեր, ու շատ ազգօգուտ բարիքներէն զատ՝ կտակաւ 800,000 դահեկանի չափ գումար մը թողուցեր է, որ Միխայել Զամիրով, Ընթօնիո Թոմիղօփուլօ և Ընասթաս Թոսթա անուն բարեկամացը ձեռքը իրենց պատշաճ համարած բարեպաշտական գործոյ մը գործածեն։ Ասոնք ալ Յունաստանի մայրաքաղաքին մէջ ազգատ և որբ տղայոց կրթութեան համար ուսումնարան մը հաստատելու որոշումնին այս անգամ Աթէնքի քաղաքապետին յայտներ են։

— Երևելի յունաղգի մը ալ Ռուսիոյ մէջ վախճանելով կտակաւ 4,800 քսակ օսմանեան դահեկան թողուցեր է Աթէնքի մէջ եղած վարժարանի մը հաստատութեանը համար։ Այս կտակը Ռուսիոյ կառավարութեան կողմէն Յունաստանի արտաքին գործոց նախարարին ծանուցուեր է։

Մայրաքաղաքիս Ընթալ լրագիրը վերոյգրելոց պէս քանի մը երևելի բարեպաշտական գործեր (ընդ որս Բումելիոյ Մեցովօ քաղաքի ընակիչներէն Լիվօրնօ մեռնող Սթուանաքի յունաղգւոյն 7½ միլիոն դահեկանի կտակը) յիշատակելով՝ հետևեալ խորհրդածութիւնը կ'ընէ։

«Ընատօլիոյ մէջ ալ երբեմն երբեմն հարուստ անձինք կը մեռնին բայց մինչև հոգին աւանդելնին մահկանացու ըլլալնուն չը հաւատալով, ժամանակին չեն խորհիր որ առաքինութիւն մը գործելով հանդերձեալ կենաց երջանկութիւնը վայելելու արժանանան, և այն ոստիճան ագահ են որ, եթէ կարելի ըլլայ, հարըստութիւններն ալ հետերնին գերեզման պիտի տանին։ Թանի մի քաղաքաց մէջ ալ խօսքի տեր այնպիսի մարդիկ կան որ իրենց հասարակաց օգտին համար գործ մը ընելնին ատ՝ ընողներուն ալ արգելք կ'ըլլան։

Փառք աստուծոյ մեր ազգը այս տեսակ մարդոցմէ ազատ է։ բայց չեմք հասկընար թէ ինչպէս կըլլայ որ ազգօգուտ ընկերութիւնները երկար չեն տևեր, երկար տևողներն ալ վերնալու կը ստիպուին, ուսումնարանները եկամտից անբաւականութենէ կը դանդատին և այսպէս տեսակ տեսակ ցաւալի դէպքեր կը պատահին։

ՎԵՐՏՔԻ ԼՈՒՐԵՐ

— Կայսերական թնդանօթարանի նախկին բարձը պաշտօնեայ Ֆէթհի փաշայի Աղևարոյն նախարար անուանեցաւ, փոխանակ Թեմիլ փաշային որ բարձրագոյն ատեանին անդամ կարգեցաւ։

— Ինգլիոյ խորհրդարանը ամսոյս 10 ին բացուեր է։ Լորտ Դ'ոն Բըսէլ պատգամաւորաց սենեկին իմացուց որ ցամաքային, ծովային և թնդանօթաձիգ զօրաց թիւը չպիտի աւելցուի։

— Պաղլոյ ծերակոյտը և օրէնսդիր ժողովը ամսոյս 14ին բացուեր են։ Կայսեր գահախօսութենէն կ'իմացուի թէ բանակին թիւը որ անցեալ տարի 30,000 պակսեցան այս տարի ալ 20,000 զօրք պիտի պակսեցունեն։

Աւստրիոյ վեհափառ Կայսրը փետրվարի 18ին կիսաւուր ժամանակը ըստ սովորութեան պտուտելու գացած ժամանակը Դ'իվանի Լիպէնի անուն երիտասարդ հունգարացի մը հանկարծ ետևէն մերձենալով օգոստափառ ինքնակալին ծոծրակը (էնդէն) դանակի սաստիկ յարուածով մը վիրաւորեր է։ Խարերաղդաբար վէրքը վտանգաւոր չը ըլլալով՝ հետևեալ օրը Կայսեր հանգիստ ըլլալը կը լսեմք։ Երբայասպանը անմիջապէս ձեռք անցեր է։

— Արլանի մէջ ամսոյս 6ին խռովութեան յուզմունք եղեր է։ Բարձանակներով և դաշոյններով զինեալ մարդկան խումբ մը պահապան զօրաց վրայ յարձակեր են ու գիշերն ալ զինուորական պաշտօնէից հաւատարիմ զինուորաց հետ ծեծկուեր են։ Արլանի կուսակալ Բատէդ էֆէնտի մարաքնտին արիութեամբ ելելնուն քառասուն զինեալ մարդիկ ձեռք անցեր ու մէկ քանին գլխատուեր։ ապստամբութիւնը անմիջապէս ղսպուեր և Արլան քաղաքը պաշարման վիճակի մէջ դրուեր է։ Կասկածելի օտարականներն ալ քաղաքէն դուրս հանուեր են։

ԱՄԵՐԻԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կոստանդնուպոլիս 11 փետրվարի։

Աշխարհս ընելոնելիքը. շարունակ կը պակէ։ մանի մը ժամանակի հետ։ Բայց Գողը

զնական զոգենաւով առնուած յաջող լուրերուն վրայ՝ արտաքոյ դէպքերը դուռ դռնէ ինչ։ փաջիրուն։ և գինիերը ղպակեցուցին ինչպէս որ կրնայիր։

Այսու ամենայնիւ փոխանակագրոց օրէ օր բարձրանալը՝ վաճառականց դժուարութիւն կուտայ։

Ընդհանուր համար 20,000 դիլլ կարծիք ցուցին առնուելիս։ Տիրական ապառման և կղզեաց համար ալ 25,000 դիլլ վաճառուելիս։

Աշխարհաց գինիերը ասոնք են։

Կարծիք ցորեն դիլլն		17էն	21	ղուռուշ
Կակաղ	„	„ 16էն	20	„
Արտացորեն	„	„ 15էն	16½	„
Գարի	„	9էն	9½	„
Հաճար	„	12էն	13	„
Վարսակ	„	6½էն	6½	„

Շուկայիս մէջ 360,000 դիլլ կարծիք 90,000 դիլլ կակաղ ցորեն, 20,000 դիլլ գարի կը գտնուի։ Ցորենի գինին ամենէն

ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

Կոստանդնուպոլիս 11 փետրվարի

Լոնդոն 3 ամիս	126½էն	127	
Փարիզ	200		
Արուիլիա	200	էն	198
Վիեննա	460	էն	456
Թրիեստ	452	էն	450
Լիվորնո	170	էն	166

Դրամագլուխով հարիւրին 3ով։

Օգիոներ 5/17 փետրվարի

Բաստոնը իրեն պէս կը բանի։ Մեյան 20 անգլ. ոսկիներ վաճառուած է 103½ էն դինլ 105 գահեկան ելեին։ Թէ՞ պէր Զինատոպանէն եկած լուրերը անյաջող են, բայց Արիզիա ուրիշ յաջող ըլլալու՝ այս ապրանքը նուազելու պէտք հասարակ կը կենայ։ և քաշիր գին ունի։ Շուկայիս մէջ գտնուածը 200 կողովի չափ է։

Հանդիսին եկած լուրերը դեկտեմբերի 24էն են, և Սինկափորի լուրերը դինլ յունվարի 3ը կը հասնին։ առաջին տպագրեալը ամենուն գինը 330էն 320 ռուպի կընդունակի։ և վերջին տպագրեալը 350 ռուպի փիրուլը։

Տոյոն 500 հակ վաճառուեցաւ 255էն 284 գահեկան կենդիները։ Այս ապրանքն ալ հասարակ է և 5,000 հակ կը գտնուի։

Դ'էհրլի ուրիշ դիրքաւորեալ է։ Այս օրերս 80 պարկի չափ ծախուեցաւ 11էն 12½ գահեկան օքան։ Գտնուածը 450 հակ է։

Ուրիշ ապրանքներ մէջ ուղղորդուելու արժանի գործ մը չկար։ Օրորը երկրներէն եկած ապրանքները նմանապէս չեն վաճառուիր, որովհետև փոխանակագրոց ուրիշ քաշիրանալու երկիր կայ։ Ընոնց գիներն առ այժմ հետևեալներն են։

Լոնդոն հինգնոյով	115 էն	115½	
Գաղղիա	„	184	„ 185
Թրիեստ		416	

Ընկերանդրիա 9 փետրուարի

Եւրոպայէն եկած անյաջող լուրերուն վրայ դեռ ընդունելու մէջ են երկրին գրեթէ ամեն բերրը։ Հիասթափ գլխաւոր ապրանքներ գինիերը։

Յորին	ապրիլը	76էն	80	ղուռուշ
Բամբակ	„	90	61	„
Գարի	„	45		„
Ոսպ	„	58		„
Բամբակենդինները		180էն	270	„
Սուսամ		180էն	190	„
Վարսակ		75էն	132	„

ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

Լոնդոն	18½
Արուիլիա	5½
Թրիեստ	135
Լիվորնո	123

ՏԵԱՐ ԵՎ ԽՄԱԳՐՈՑՍ
ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ ՍԱՀԱԿ ԱՊՐՕՆՍ
Ընդարձակ թարգմանական Բաղդրիդոյն Դրան

Ի ՏՊԱՐԱՆԻ ՆՈՅԵԱՆ ԱՂԱՒՆԻՈՅ
Կոստանդնուպոլիս Թաշ խան 'ի Պէյ-ազ